



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՎԴ 1314/05/10

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՍՈՒՄԻ ԸՆԴՊԻՆՈՒՄԸ ՄԱՍՆԱԿԻՈՐԵՆ ՄԵՐԺԵԼՈՒ ԵՎ ՄԻ ՄԱՍՈՎ ՀԱՅՑԱԴԻՍՈՒՄԸ ՎԱՐՈՒՅՁ ԸՆԴՊԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ



26.04.2010թ.

ք. Երևան

ՀՀ վարչական դատարանը /դատավոր Ա.Առաքելյան/, ծանոթանալով «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի կողմից ներկայացված հայցադիմումին ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի ղեկավար Գ.Հայրապետյանի, ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության պետ Ս.Սեդրակյանի՝ հրամանը վերացնելու, տեղեկատվության տրամադրմանը պարտավորեցնելու և վարչական տույժի ենթարկելու պահանջների մասին,

ՊԱՐԶԵՑ

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ն հայցադիմում է ներկայացրել ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի ղեկավար Գ.Հայրապետյանի, ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության պետ Ս.Սեդրակյանի՝ հրամանը վերացնելու, տեղեկատվության տրամադրմանը պարտավորեցնելու և վարչական տույժի ենթարկելու պահանջների մասին:

Հայցադիմումով խնդրվել է.

1. Վերացնել «ՀՀ պաշտպանության նախարարության գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկի մասին» հրամանը.

2. Պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարությանը տեղեկատվություն տրամադրել.

3. ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի ղեկավար Գ. Հայրապետյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ տուգանքի 50.000 ՀՀ դրամի չափով.

4. ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության պետ, ՔԿԾ 2-րդ դասակի պետական խորհրդական Ս. Սեդրակյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ տուգանքի 50.000 ՀՀ դրամի

Ուսումնասիրելով հայցադիմումը դատարանը գտնում է, որ հայցադիմումի ընդունումը մասնակիորեն ենթակա է մերժման, իսկ մի մասով հայցադիմումը ենթակա է վարույթ ընդունման, հետևյալ հիմնավորմամբ:

3-րդ և 4-րդ պահանջներով հայցվորը պահանջել է ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի ղեկավար Գ. Հայրապետյանին և ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության պետ, ՔԿԾ 2-րդ դասակի պետական խորհրդական Ս. Սեդրակյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ տուգանքի՝ յուրաքանչյուրին 50.000 դրամի չափով:

ՀՀ վարչական դատարանի օրենսգրքի 151 հոդվածի համաձայն՝ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերը հարուցվում են օրենքով վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ կազմելու լիազորություն ունեցող մարմինների եւ պաշտոնատար անձանց (այսուհետ՝ իրավասու մարմիններ) հայցադիմումների հիման վրա:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 05.02.2010թ. թիվ ՍԴՈ 864 որոշմամբ մասնավորապես արձանագրել է. «... սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական կարգով անձանց, այդ թվում՝ անձի իրավունքը խախտած պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության ենթարկելը չի հանդիսանում անձի խախտված իրավունքների պարտադիր բաղադրատարր և, հետևաբար, անձանց՝ վարչական պատասխանատվության ենթարկելու հայցադիմումով դատարան դիմելու իրավասություն չվերապահելը չի կարող խոչընդոտել այդ անձի՝ դատարանի մատչելիության և դատական պաշտպանության, դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների իրացմանը, և խնդրը առարկա հարցով դատարան դիմելու իրավասությունը բացառապես վարչական մարմիններին եւ դրանց պաշտոնատար անձանց վերապահելն իրավաչափ է ու օրենսգրքի իրավակարգավորման հիմքում ընկած տրամաբանության շրջանակներում է» և

եզրահանգել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 151 հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահամանադրությանը:

Նշվածի հաշվառմամբ դատարանը գտնում է, որ հայցադիմումում նշված 3-րդ և 4-րդ պահանջները ներկայացվել են դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձի կողմից:

Վերոգրյալի հաշվառմամբ, դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքերով սույն հայցադիմումի ընդունումը՝ հայցադիմումում նշված 3-րդ և 4-րդ պահանջների մասով, ենթակա է մերժման:

Ներկայացված 1-ին և 2-րդ պահանջների կապակցությամբ դատարանը փաստում է, որ դրանք ներկայացվել են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ և 73-րդ հոդվածների պահանջներին համապատասխան, ուստի, այդ մասով հայցադիմումը պետք է ընդունել վարույթ:

Ամբողջ վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 76, 77, 79, 125, 126 և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144 հոդվածներով՝ դատարանը

#### ՈՐՈՇԵՑ

ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի ղեկավար Գ. Հայրապետյանին և ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության պետ, ԲԿԾ 2-րդ դասակի պետական խորհրդական Ս. Սեդրակյանին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջների մասով՝ հայցադիմումի ընդունումը մերժել:

Մնացած մասով հայցադիմումն ընդունել վարույթ:

Հայցադիմումի ընդունումը մասնակիորեն մերժելու մասով՝ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ այն ստանալու օրվանից հետո հնգօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ա. ԱՂԱՔԵԼՅԱՆ

